ՀՀԿ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 մարտ, 2024 թվականի № 25-Լ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ՏԱՐԵԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ մասերով, 26-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 27-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետով, 28-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետով, Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի 2012 թվականի դեկտեմբերի 26-ի N 61-Լ որոշմամբ հաստատված «Հանրային հեռուստառադիոընկերության ֆինանսական միջոցների օգտագործման կարգի 21-րդ կետով, «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ «Ընկերություն») կանոնադրությամբ, հիմք ընդունելով Ընկերության գործադիր տնօրենի 2024 թվականի մարտի 28-ի N Ռ/24 01/34 գրությունը և հաշվի առնելով Ընկերության 2023 թվականի ֆինանսատնտեսական գործունեության արդյունքներով տարեկան ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական կազմակերպության եզրակացությունը՝ Հանրային հեռարձակողի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Հաստատել Ընկերության 2023 թվականի ֆինանսատնտեսական գործունեության արդյունքներով ֆինանսական հաշվետվությունները (2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն, 2023 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն, սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն, դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ)՝ համաձայն սույն որոշման № 1 հավելվածի:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ա. ՇԻՐԻՆՅԱՆ

29 մարտ, 2024 թվականի

ք. Երևան